



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

հունիսի 2018 թվականի N°Ա
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱԳՐԵՎԱՆԴ ԹԱՂԱՄԱՍԻ N°16 ՀԱՍՅԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ
ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սույն թվականի մարտի 16-ի N°04-ԴԳ-190 գրությունը, համաձայն որի՝ Ընկերության և Երևան քաղաքի Բագրևանդ թաղամասի N°16 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ շենք) կառուցապատողի միջև կնքված միացման պայմանագրի շրջանակում Ընկերությունն իրականացրել է նախագծով նախատեսված շինմոնտաժային աշխատանքները, իսկ կառուցապատողը վճարել է կանխավճար՝ 5 000 000 դրամի չափով և ներկայումս սնանկ է ճանաչված,

բ) շենքի մի խումբ բնակիչների սույն թվականի փետրվարի 21-ի դիմումը՝ շենքի յուրաքանչյուր սեփականատիրոջը միացման վճարի չվճարված 3 418 000 դրամի վճարումն իր մասով իրականացնելու և առանձին բաժանորդ ձևակերպելու խնդրանքով,

գ) Ընկերության սույն թվականի մայիսի 31-ի N°04-ԴԳ-446 և շենքի բնակիչների հունիսի 14-ի գրությունները, համաձայն որոնց վերջիններս չեն առարկում շենքի սպառման համակարգի էլեկտրամատակարարումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N°358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

- 1) Չենքի՝ սույն որոշման հավելվածում նշված բնակիչների կողմից իրենց բնակարանների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման վճարի (յուրաքանչյուր բնակարանի համար 57 900 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդամենը՝ 868 500 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն) վճարումը հավաստող փաստաթղթերը Ընկերություն ներկայացնում է Չենքի բնակիչների կողմից լիազորված անձը.
- 2) Ընկերությունը, սույն կետի 1-ին ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովում է սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին՝ լարման տակ չդնելով Չենքի սպառման համակարգը.
- 3) սույն կետի 1-ին ենթակետում նշված միացման վճարը վճարելուց հետո սույն որոշման հավելվածում նշված Չենքի բնակիչները, իսկ Չենքի լուսավորության և ավտոկայանատեղիների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման համար՝ նախաձեռնող անձը (բնակիչը կամ լիազորված անձը), դիմում են Ընկերություն՝ կնքելու էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ կից ներկայացնելով Կանոնների 13.7.2 կետով սահմանված տեղեկատվությունը և փաստաթղթերը.
- 4) Չենքի՝ սույն որոշման հավելվածում չընդգրկված բնակարանների և այլ տարածքների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման նպատակով նախաձեռնող անձը (բնակիչը կամ առևտրային սպառողը) դիմում է Ընկերություն՝ կից ներկայացնելով Կանոնների 13.7.2 կետով սահմանված տեղեկատվությունը, փաստաթղթերը և 57 900 ՀՀ դրամի չափով միացման վճարի վճարումը հավաստող փաստաթղթերը.
- 5) Ընկերությունը, սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում դիմումը, իսկ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքում դիմումը և նույն ենթակետով սահմանված միացման վճարի վճարման հավաստումը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմող անձին ներկայացնում է Պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր կողմից ստորագրված Պայմանագիրը՝ 2 օրինակից.
- 6) չի թույլատրվում սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված դիմումը ներկայացրած անձանցից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու

հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, սույն որոշմամբ, Պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և շենքի բնակիչների կողմից լիազորված անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
հունիսի 2018թ.